

ՊԱՏՈՒՄ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՌԵՖԵՐԵՆՑԻԱՑԻԱ ՄՈՎԱՍԵԱ
ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵԶ
(Գիրք առաջին, գլուխ ԺԵ՝ Յաղագս Արայի, Եւ մահուան նորա
պատերազմաւ ի Շամիրամայ)

ՄԻՇԵԼ ՓՈԼԱԴՅԱՆ (Փարիզ)

Կասկած չկա, որ միջնադարյան Հայտնի պատմիչների շարքում, Հայկական Հերոգոտոր՝ Մովսես Խորենացին, առաջնակարգ տեղ է զբաղեցնում՝ լինի Հայոց պատմութեան գրական արժեքի, թե՛ Հարուստ պատմական տեղեկութիւնների շնորհիւ:

Զգուշացնեմ իսկույն, որ ես մտադիր չեմ հերքել Խորենացու այս կամ այն մեկնաբանութիւնը, առավել ևս քննադատել զանազան կարծիքները Պատմութեան այս կամ այն դարաշրջանին պատկանելու կամ չպատկանելու, հիշատակված պատմական տվյալների ճշգրտութեան մասին: Կզբաղվեմ հիմնականում պատումի ներքին տրամաբանութեամբ (այսինքն միաժամանակ իմաստաբանական տարածքի ստորոգելիական (acte de predication) և պրագմատիկ տարածքի կատարողական (acte illocutoire) գործունեութեամբ և բայական ժամանակների նախակառուցվածքով, թե ինչով են դրանք կազմակերպում, օրինակ, պատումը: Նկատի ունեմ Հարաբերութիւնները պատմական իրադարձների և ժամանակային ռեֆերենցիացիայի միջև, կարճ ասած, ի՞նչ է իսկապես ցուցադրված (և միևնույն ժամանակ քողարկված) իրադարձից: Կհետազոտեմ և կառանձնացնեմ նաև պատմիչի սեփական տարածքը. տեղը (տեղերը), որտեղից նա խոսում է և նայում: Քննարկման կառնվի Պատմութեան առաջին գրքի 15-րդ գլուխը: Նախ ներկայացնենք տեքստը.

Յագագս Արայի, և մահուան նորա պատերազմաւ ի Շամիրամայ:

Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինոսի խնամակալեաց իւրոց Հայրենեացն, նոյնպիսում շնորհի արժանաւորեալ ի Նինոսէ՝ որպես և Հայրն իւր Արամ: Բայց վաւաչն այն և բորբորիտոնն Շամիրամ ի բազում ամաց լուեալ զզեզեցկութենէ նորա՝ ցանկանայր Հասանել, այլ ոչ ինչ յայտնաւես զայսպիսիս իշխէր զործել: Իսկ յետ վախճանելոյն, կամ Վախստական լինելոյն Նինոսի ի Կրետե, որպես Հավանեալ եմ, Համարձակ պատուելով Շամիրամայ զախտն՝ առաքէ Հրեշտակս առ Արայն զեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք, բազում ազաչանօք և խոստամբ պարգևաց, զալ առ նա ի Նինուէ, կամ առնուլ կնուութեան և թագաւորել ի վերայ ամենայնի՝ որոց տիրէր և Նինոս, և կամ կատարել զկամս ցանկութեան նորա և դառնալ մեծաւ պատարագօք և խաղազութեամբ ի տեղի իւր:

* Հոգվածը տպագրվում է առանց խմբագրական միջամտության (խմբ.):

Եվ ի բազում անգամ երթևեկութեան հրեշտակազնացութեանն լինել, և յոչ հավանել Արային, ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ՝ ի վախճանի պատգամաւորութեանն առնու զբազմութիւն զօրաց իւրոց, և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց ի վերայ Արայի: Բայց որչափ գիմացն էր նշանակեալ, ոչ այնչափ ի սպանանել զնա և ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ զբռամբ ածել, զի լցցէ զկամս ցանկութեան իւրոյ: զի առ յովթ ցանկականի մոլեգնութեանն, ի բանսն որ զնմանէ՝ որպէս ի տեսութիւն շամբշութեամբ վառեալ էր: Գայ հասանէ տագնապաւ ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ: Եվ ի լինել ճակատուն՝ պատուէր աայ զօրապետաց իւրոց, թե դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն: Իսկ ի լինել մարտին՝ հարկանի զօրն Արայի, մեռանի և Արայ ի պատերազմին ի մանկանցն Շամիրամայ: Դիակապուտս առաքէ տիկինն յետ յաղթութեանն ի տեղի ճակատուն, խնդրել ի մեջ գիականցն անկելոց զըզձալին իւր և զտարփածուն: Գտանեն զԱրայն մեռեալ ի մէջ քաջամարտկացն, և հրամայէ գնել զնա ի վերնատան ապարանիցն:

Իսկ ի գրգռել միւսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ, քինախնդիր լինել մահուանն Արայի՝ ասէ. «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա, և կենդանասցի»: Միանգամայն և ակն ունէր զիւթութեամբ վհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տուփական ցանկութեանն: Իսկ իբրև նեխեցաւ զի նորա՝ հրամայէ ընկենուլ ի վիհ մեծ և ծածկել. զմի ոմն ի հոմանեաց իւրոց զարգարեալ ունելով ի ծածուկ՝ համբաւէ զնմանէ այսպէս. «Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ լցին զփափագ մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք և կամակատարք»: Կանգնէ և նոր իմն պատկեր յանուն դից, և մեծապէս զոհիւք պատուէ, ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացուցին զԱրայ: Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ գամենեսեան՝ դադարեցուցանէ զխազմն:

Եւ որ ինչ յազադս Արայի՝ կարճառօտիւ և այսչափ շատ լիցի յիշատակել: Սա կեցեալ ամս՝ ծնաւ զԿարգոս:

1. ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՀԱՏՈՒՅԹԸ՝ ԸՆՏՐԱՆՔ ԵՎ ԲԱՑՈՒՄ

Նարատուրդիական տեսանկյունից, 15-րդ գլուխը կազմում է մի հատույթ: Նախ ասեմ, որ համաձայնելով իմաստաբանների հետ, ես պատուով կքննորոշեմ որպէս մի իմաստարանական գործունեութիւն, որով իրադարձներ են ներկայացվում: Իսկ ինչ վերաբերում է պատմողական հատույթին, ըստ սեմիոտների, այն կարելի է համարել իրադարձների հաջորդականութիւն՝ իրադարձներ, որոնք իրար հետ սերտ կապի մեջ են և կանխենթադրում են մեկը մյուսին: Պատումին նախորդում է, օպերատիվ ժամանակահատվածում, հատույթային ստուգումը (*sequential scanning* ինչպէս ասում են ճանաչողական գալորցի լեզվաբանները). մտածողութիւնը նկատում է իրադարձները, համեմատում իրար հետ, հետո կարգավորում (հավասարակշռութիւն մտցնում): Ըստ 15-րդ գլխում պարունակվող ժամա-

նակահատվածի, կարելի է ասել, որ դործ ունենք ավելի շուտ պատմողական շղթայի հետ՝ Արայի կյանքը և մահը, այսինքն ունենք մի ճակատագրի ամբողջական տեսարանը: Որպես արխետիպային կառույց, սույն ցիկլը վերարտադրում է մարդկային ծնունդ – մահ ցիկլը:

Իրադարձները, որոնք մտնում են պատմողական հատույթի կազմի մեջ, ընտրված են ուռուցիկ լինելու (*salliance*) սկզբունքով, այսինքն կան իրադարձներ, որոնք անցնում են աննկատ: Ինչպես նաև կան իրադարձներ, որոնք պարզապես հեռացված են: Ամեն պահ մեր շուրջ որևէ բան է տեղի ունենում, բայց բոլոր իրադարձները չեն, որ արձանագրվում են մարդկանց հիշողության մեջ, անցնում պատմությանը: Այսպիսով, իրադարձների ընտրանքը հիմնավորապես սուբյեկտիվ է, պատկանում է ֆոկալիզացիայի (կիզակետման) պրոբլեմատիկային: Պատումի իդեոլոգիան սկսվում է այստեղ: Պատմողական տեքստի մեջ մտնող իրադարձները 3 տեսակի են.

1. Վտարված իրադարձներ: Դրանք 2-ն են. ա) աննշան իրադարձներ, բ) գեղջված իրադարձներ, որոնք կարելի է վերականգնել:

2. Հետին պլան վանված կամ խտացած (*comprime*) իրադարձներ:

3. Ընդգծված կամ ռելիեֆային իրադարձներ (որոնք զբաղեցնում են ավելի մեծ տարածք):

Այս 3 տեսակի իրադարձները անցնում են 3 փուլերով.

1. Ռեպրեզենտացիան՝ իրադարձի տեղորոշումը ըստ մտային արձանագրման:

2. Ռեֆերենցիացիան՝ իրադարձի տեղորոշումը ըստ արտաքին սպեցիֆիկ աշխարհի: Փքման երևույթը դտնվում է այստեղ:

3. Կարգավորումը՝ համատեղումը և տեղադրումը խոսող անձանց միջև:

Պատմադրույթունը ենթադրում է իրադարձների վերամշակում: Մովսես Խորենացին աշխատում է տրամաբանորեն, նախօրոք ընտրված (*preselection*) իրադարձների վրա և պարզ է, որ սա ունի իր հետևանքները:

Պատումը, որպես իմաստի քերականություն, նմանապես իմաստի արտադրանք է և իրադարձների ընտրությունը կախման մեջ է սույն իմաստից: Չպետք է շփոթել իհարկե պատում (*narration*) և դիեգեզիս (*diégèse* – տեղի ունեցող երևույթները ինչպես կան): Համաձայն Ժ. Ֆոնտանի-յի¹ ես պատումը համարում եմ խոսքի յուրահատուկ եղանակ (*mode spécifique du discours*): Մենք կտեսնենք, որ մեր տեքստում իրադարձների ընտրանքը խիստ եղանակավորում է պատմիչի խոսքը, չնայած այն հանդամանքին, որ Խորենացին փորձում է մնալ օբյեկտիվ և անկախ: Առասպելի ընթերցողական կողմը սխտեմատիկորեն վերամշակված է որպես պատմական կողմ: Չմոռանանք, որ ինչ վերաբերում էր պատումին, անտիկ հռետորիկան պահանջում էր լոգոսի (տե՛ս Արիստոտել, Հռետորիկա II) դերակառույթունը (խոհամտություն և օբյեկտիվություն) պաթոսի հանդեպ:

Պատմողական հատույթ ստեղծելու համար, բավական է որ պատմիչը թողնի, որ իրադարձները (միկրոհատույթները) մեկը մյուսի հետևից անցեն մի մտային պատուհանով, որի չափերը նախօրոք որոշում է պատմիչը: Իրադարձները գալիս են անցյալից, դրանց նախորդում է միշտ պատումի

1 J. Fontanille. Sémiotique du Discours. Paris, 1998.

ժամանակին, և պատմիչը ստանում է ժամանակը միշտ անցյալով: Ամեն մի միկրոհատույթ կազմում է մի իմաստային սխեմա, որն իր հերթին պարունակում է արժույթային համակարգեր: Հեռացնել, ուրեմն, այս կամ այն իրագարձը կամ էլ ընտրել այն (սա իհարկե պատումի գաղտնիքն է) համարժեք կլինի մի պատուհանի բացմանը կամ փակմանը: Չպետք է կարծել, որ սույն աշխատանքը բոլորովին անմեղ աշխատանք է: Պատումը ոչ միայն արտացոլում է այն, ինչ տեղի է ունենում. այն հետազոտում է և ղեկավարության տակ վերցնում այն բոլորը, ինչ կարող է տեղի ունենալ, պատումը նաև մեկնաբանություն է: Պատումը, գրում է Ժ. Ժենետը, ասում է միշտ ավելի քիչ, քան իրական պարունակությունը, բայց հաճախ մեզ հասկացնում է ավելի շատ, քան ասածը²:

Խորենացու Հայոց պատմության 15-րդ գլխում, օրինակ, հատուկ ուշադրություն է դարձված (ոելիեֆային է) Արայի «հարույթյան»-ը, մյուս իրադարձների հետ համեմատած այստեղ առկա է ընտրանք և մաքսիմալ բացում: Հասկանալ սույն ընտրանքը կարելի է միմիայն ինտերտեքստի քողարկված և անդուլ ներկայության շնորհիվ: Պատմիչ լինելուց առաջ, Խորենացին նախ ընթերցող է և որպես ընթերցող նախորդում է մեզ իր ձեռք բերած պատմական գրականության իմացությունը: Խորենացին գրում է սույն տեքստը արդեն մտքում ունենալով 3 ուրիշ հարույթյուններ.

1. Ղազարոսի հարույթյունը (ամենայն հավանականություն):
2. Օղիրիսի հարույթյունը (հնարավոր տարբերակ, եթե հիշենք Խորենացու ուսումն Ալեքսանդրիայում):
3. Իննանայի (կամ Իշտարի) հարույթյունը սումերական առասպելում: Նշեմ այստեղ մի նշանակալից մանրուք. առասպելում (ինչպես Խորենացու մոտ) Իշտարի հարույթյունը հնարավոր է դառնում փոխարինողի շնորհիվ:

Երկրորդ և երրորդ հարույթյունները պատկանում են Շամիրամի և Խորենացու գիտելիքների ընդհանուր տարածքին (եթե, իհարկե, Շամիրամի պատմությունը համարենք իրական): Ամենայն հավանականությամբ, պետք է որ Շամիրամը տեղյակ լիներ Իզիսի և Օղիրիսի եգիպտական առասպելին (Աբրահամի ժամանակաշրջանից 5-ից 8 դար առաջ): Իզիսը, ինչպես գիտենք, կենդանացնում է իր սպանված ամուսնուն՝ Օղիրիսին: Նա նույնիսկ հղիանում է Օղիրիսից *post mortem* (մահվանից հետո): Ինչ վերաբերում է Իշտարին, ապա նա պատժված է աստվածների կողմից, քանի որ գողացել է գրախտի ծառը: Իշտարը մեռնում է և հետո հարույթյուն առնում անմահության խոտի և ջրի շնորհիվ: Մեռյալների աշխարհում նրան փոխարինում է մեկ ուրիշը:

Սակայն պարզ է, որ ամբողջ հարույթյան միկրոհատույթը կառուցված է նկատի ունենալով Ղազարոսին: Եթե Արան տեղավորված է ապարանքի վերնատանը (ըստ երևույթին մի դիկուրաթում³), ապա Ղազարոսը տեղա-

2 G. G e n e t t e. Figures III. Paris, 1972, p. 213.

3 Զիկուրաթը մի շինություն է՝ հիմնականում 65x45 չափերով: Վերջին հարկը տրամադրված է լուսնի աստծուն: Երեք սանդուղքներ տանում են մինչև վերջին հարկ, երեքն էլ դտնվում են հյուսիսարևելյան կողմում: Բաբելոնի հանրահայտ աշտարակը կարելի է համարել մի հսկայական զիկուրաթ: Հերոդոտն ասում է, որ վերջին հարկը արգել-

վորված էր, ինչպես գիտենք, դամբարանում: Արայի «հարուստներ»-ով զբաղվում են ասորական աստվածները, հնարավոր է նանանան՝ լուսնի աստվածը (նա ընդհանրապես պատկերվում էր ցուլի արտաքինով), քանի որ գիկուրաթի վերջին հարկը հատկացված էր այս աստծուն: Հետաքրքիր է, որ Արային լիզում են կենդանու կերպարանք ստացած աստվածները, քանի որ նանանան նաև բնութայն աստվածն է, իսկ նրա աղջիկը՝ Իշտարը, թեթև բարձրի տեր կին է, ունի տասնյակ սիրեկաններ⁴: Եթե Արայի «հարուստներ»-ը ձախողվում է, Ղազարոսին, ինչպես գիտենք, հաջողվում է: Չմոռանաք, որ V գարում ենք Հ. Ք. Հետո (ես չեմ վիճի Խորենացու տեքստի թվագրութայն հարցի շուրջ) և քրիստոնեությունը իշխում է Հայաստանում ընդամենը 2 դար: Հեթանոսական թեման ուղղակիորեն ներառված է, ինչպես կտեսնենք, Շամիրամի կերպարում: Անկարելի է անտեսել ինտերտեքստի ճնշող ներկայությունը սույն տեքստում. այն եղանակավորում է ամբողջ 15-րդ գլուխը: Խորենացին հիմնում է իր խոսքը ընդհանուր կանխադրույթի վրա՝ քրիստոնեական գաղափարախոսությունը: Անտիկ հուստոսիկայի 3 ժանրերից (Խորենացին պետք է որ տեղյակ լինեի Արիստոտելի Հուստոսիկայից) պատմիչն այստեղ վերցնում է, ըստ երևույթին, դատավարական ժանրը՝ դատապարտում իրոնիայի միջոցով:

Պատումի եղանակավորումը և կերպավորումը, որոնք ես ավելի մանրամասնորեն կուսումնասիրեմ 2-րդ մասում, պատկանում են մի ուրիշ առավել ևս վճռական երևույթի. գիտական խոսքի կատարողականությունը այստեղ համապատասխանում է Շամիրամի ձախողմանը: Պատմիչի իղձր մի ուրիշ հրաշք է, և նա համարյա համոզված է, որ հրաշքը կկայանա. Խորենացին շատ լավ գիտակցում է, որ սույն տողերը գրելով ստեղծում, կառուցում է մի նոր աշխարհ: Ինչքան Շամիրամը կձախողի իր փորձը (չմոռանանք, որ Շամիրամն էլ ձգտում է կատարողական խոսքին, ինչպես Քրիստոսը), այնքան Խորենացուն հեշտ կլինի հիմնավորել իր ավանդական խոսքը: Ամբողջ հատույթն, ուրեմն, կրում է Շամիրամ-Խորենացի մրցակցութայն դրոշմը՝ խորքային երկխոսությունը:

Պատմիչի խոսքի կանխադրույթներից մեկը և ամենակարևորը, պահանջում է օբյեկտիվություն. Խորենացին ունի, ինչպես կտեսնենք, պատմիչի և ոչ պոետի (ըստի անտիկ իմաստով) հստակ գիրքորոշում. նրա նպատակն է վերանայել առասպելները: Ահա ինչ է նա գրում Սահակ Բագրատունուն, առաջին գրքի վերջում զանազան առասպելների մասին (լեզվաբանի համար, սույն տողերը կարելի է համարել խոսքային պայմանագիր): Հիշեցնենք, որ Պատմությունը Սահակի պատվերն է.

«Այլ ծանի՛ր զատելութիւն մեր առ այսպիսի բան, զի ոչ յառաջինսն մեր ասացեալ գիրս, եւ ոչ ի վերջին բանս արժանատրեցաք շարել, այլ զատ և ուրիշ»: Գիտական խոսքի կատարողականությունը պարունակում

ված էր մարդկանց համար և առանց արձանի էր: Դա մի դատարկ բնակարան էր, միայն մի սուկե անկողնով և մի սեղանով:


4 Հաջորդ (5-րդ) գլխում, Շամիրամը այսօրվա լեզվով ասած՝ էկոլոգիական զգացմունքներ է արտահայտում: Պետք է այսպիսի բարեխառն կլիմայում, մաքուր ջրերով երկրում մեզ համար քաղաք և բնակչության արքունիք չինել, որպեսզի տարվա շրջանի մի չորրորդ մասը, այսինքն ամառային եղանակը, ամեն տեսակ վայելչութամբ անցկացնենք Հայաստանում, իսկ մյուս երեք մասը, օդի դով ժամանակը, կյանք վայելենք Երևանում:

է, ի միջի այլոց, մեկ ուրիշ քողարկված խոսք՝ (իմպլիցիտ) խոսող անձի (խոսքի ատյանի) հաստատումը: Այսպիսով, ծնվում է մի յուրօրինակ հակադարձ դիալեկտիկա պատմական տեքստի և ապագայի հեղինակի միջև:

Ամեն մի պատմողական հատույթ կանխենթադրում է բացում և փակում. երկուսն էլ ներկա են 15-րդ դլխում: Ինչպես դասական քրոնիկոններում, փակումն այստեղ իր հետ բերում է մի բացում և հակառակը: Սրանով է բացատրվում քրոնիկոնի առաջընթացը մի ցիկլից մյուսը:

$$W 1 \Rightarrow W 2 \Rightarrow W 3 \Rightarrow W n$$

$W = \text{window}$ (պատուհան):



Սխեմա 1

Այս ամենն, իհարկե, կապված է սեմիոտիկ տարածքի կետադրութայան հետ: Որտե՞ղ է սկսվում պատմիչի խոսքը և որտե՞ղ վերջանում: Եթե բավականին դյուրին է առանձնացնել պատմողական հատույթը, ապա խնդիրը բոլորովին տարբեր է խոսքի համար: Առայժմ միակ հնարավոր աշխատանքը խոսքի երկու տեսակների առանձնացումն է՝ ասույթային խոսքը (անձը որպես խոսք) և ասույթի խոսքը (աշխարհը որպես խոսք): Մնացածը ես կթողնեմ փիլիսոփաներին...

Վերադառնանք մտային պատուհանին. ես ավելի մանրամասնորեն կանդրադառնամ պատուհանի բացման պրոցեսին, երբ կուսումնասիրեմ բացող բայը՝ պանտոնիմը: Իրար հաջորդող իրադարձները ներկայանում են 3 ձևով (նշենք իսկույն, որ երկխոսութունը ևս ես համարում եմ իրադարձ)՝ ամփոփում, գիալոգ և նկարագրութուն:

1. Ամփոփումը

Այն ծածկում է համարյա ամբողջ դլուխը և ստեղծում նկարագրութայանը և դիալոգին հակառակ (դանդաղեցում), պատմողական դինամիկա (արագացում), որը հատուկ է պատումին: Այս վերջինը, սեմիոտիկ տարածքում, երևան է դալիս որպես փոխակերպում՝ այսինքն բացող իրավիճակի շրջադասութուն. տեքստի երկու պատմողական ծրագրերը (PN)՝ իշխել և սիրել ենթարկված են ինվերսիայի (օբյեկտները անջատված են):

ՀԻՄՆԱՎՈՐՈՂ PN
(ունակութուն)

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ PN
(կատարողականութուն)

$$PN = F\{S1 \rightarrow (S2 \cap O)\}$$

Արա: Իշխանություն

Շամիրամ: Միացում

S1 – Լինելիություն սուբյեկտ

$$PN = F\{S1 \rightarrow (S2 \cup O)\}$$

Արա: Անկում

Շամիրամ: Բաժանում

S2 = Կատարողական սուբյեկտ
O = Օբյեկտ

$\cap \cup$ = Միացում / Անջատում

F = Ֆունկցիա

Շամիրամի նպատակն իրոք Արայի սերն էր ... երկրորդ մասում կտեսնենք, որ դա այնքան էլ հավանական չէ: Շամիրամի պատմողական ծրագիրը երկրմաստ է: Այստեղ, համենայն դեպս, նշենք, որ տեքստի խորքային կառույցը (խորքային պատմողական շարահյուսություն և հիմնավոր իմաստ) ներկայացնում է մի ուրիշ պատմողական ծրագիր, որով և բացատրվում է Արայի «հարությունը» շնորհված կարևորությունը: Դա հեթանոսական և քրիստոնեական աշխարհների բախումն է: Շամիրամի հաղթանակին խորքային կառույցում (Հայաստանի գրավումը) համապատասխանում է նրա պարտությունը Արայի «հարությունում», քանի որ այս վերջինը հիշեցնում է ընթերցողին Ղազարոսի հաջողված հարությունը: Առաջինի (Շամիրամի) արժեքազրկումին արձագանքում է երկրորդի արժեքավորումը: Հենց այստեղ է հեղինակի (և ոչ հերոսի) վճռական փորձությունը: Այս ծրագիրն ունի միմիայն մասնակի մակերեսային իրականացում:

Հեթանոսական աշխարհ

Քրիստոնեական աշխարհ

$$PN = F\{S1 \rightarrow (S2 \cup O)\} \text{ SIMUL } PN = F\{S1 \rightarrow (S2 \cap O)\}$$

O = կրոնական իշխանություն Simul = համընկնում

Ինչ վերաբերում է պատմողական գինամիկային, այն գանգաղեցրած է ներկա ժամանակով տրված միկրոհատույթների դեպքում, քանի որ սրանք մատնացույց են անում գործողությունը կտրված իր սկզբից և իր վերջից (կանգրադառնանք այս հարցին երկրորդ մասում): Ընդհանուր առմամբ այս գլխում խորենացին օգտագործում է ժամանակային կոմպրեսիան (խտացումը):

Եվ ի բազում անգամ երթևեկություն հրեշտակազնացություն լինել, և յոչ հաւանել Արային, ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ՝ ի վախճանի պատգամաւորութեանն առնու զբազմութիւն զօրաց իւրոց, և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց ի վերայ Արայի:

Իր ողբերգությունը ուշադիր քանի որ պատուհանը նաև բեմ է, գրամատիկացիայի և հանդեսի վայր, խորենացին դիմում է էլիպսի (կրճատման), օրինակ՝ գլխի փակման հատվածում:

2. Դիալոգը

Խորենացուն, ամենայն հավանականությամբ, ծանոթ էր հունական **μυθεω** բառի առաջին իմաստը (երկրորդ իմաստն է *առասպել*). այն նշանակում էր խոսք (տե՛ս էսքիլես, Պարսիկները, 713): Սույն դիալոգում խորենացին դիմում է դիալոգին երկու անգամ՝ երկու դադար, ռիթմային ելևէջումներ, որոնք կիզակետում են ոչ միայն գաղափարական հանգուցյաները, այլև շեշտը դնում տեղեկատվական ֆունկցիայի պատմական խոսքի վրա:

Դրանք բերում են ռեֆերենցիացիա, տեղեկություն և օբյեկտիվություն, քանի որ պերսոնաժին առանձնացնում են հեղինակից: Անուղղակի խոսքը կատիպեր նրան ինչ-որ կերպ իր վրա վերցնել խոսող անձի (այստեղ Շամիրամը) միտքը: Նշեմ, վերջապես, որ ուղղակի խոսքը, ինչպես և նկարագրությունները, ընթերցողի մոտ սպասում են ստեղծում, կարևոր պահ պատմիչի համար, քանի որ մեջբերումները վերաբերում են Արայի «հարուստներ»:

Ուշադրություն է գրավում հատկապես այն փաստը, որ տեքստի երկու դիալոգները, այսպես ասած, կիսատ են. առաջին դեպքում տրված է միայն ամփոփված հարցի (զինվորների սպառնանքի) պատասխանը, այնինչ երկրորդ դեպքում խոսքը ներկայացված է լսովի (հեղինակը լսել է մի ուրիշից, որը լսել է ...), կոնտեքստից կտրված, այն արդեն համարյա խոսքային պատում է: Ես կուսումնասիրեմ սույն երևույթի ներքին մեխանիզմը երկրորդ մասում: Հետաքրքիրն այն է, որ ուղղակի խոսքի արժանանում է միայն Շամիրամը: Ինչպես Գրեմասն⁵ է ասում, փնտրող անձից նա անցնում է խոսող անձի կարգավիճակին: Պատճառը կամ ինտերտեքստն է (նորենացու աղբյուրները) կամ էլ Շամիրամին խոսեցնելու կարիքը: Ստացվում է, որ առաջին դեպքում (ինտերտեքստը) պատմիչը վերականգնում է (գաղափարական ընարանք) Շամիրամի հեռացված (*supprime*) խոսքերի մի մասը (*restaure*):

Մեջբերում Ա.

Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա, և կենդանասցի:

Մեջբերում Բ.

Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ լցին զփափագ մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք և կամակատարք:

3. Նկարագրություններ

Եթե պատումը կառուցվում է ժամանակում տեղի ունեցող գործողություններում (զինամիկ դրսևորում՝ ուրիշ), ապա նկարագրությունները կառուցվում են տարածքում (ստատիկ դրսևորում՝ գազար): 15-րդ գլխում նկարագրությունները քիչ են: Ընգրկված 4 նկարագրությունները տատանվում են պատմաբանի գիտական խոսքի (տեղեկացնելու կանոն) և վիպական խոսքի միջև (հետին պլանի հոգեբանական ֆունկցիան): Հետևյալ 3 նկարագրությունները (Ա, Բ, Դ) կաղմում են, այսպես ասած, Շամիրամ անձի հատկանիշները (*propriete*), անցումանիշը (*mot de passe*) և Շամիրամ անձին վերածում պերսոնաժի: Այստեղից էլ սեմանտիկ գաշտի (սեռական ցանկություն) ընգրծված ներկայությունը ինչպես հոմերոսական էպիտետում: Բաբելոնյան թագուհու վավաչոտությունը գառնում է կլիշե, սա հավանաբար գալիս է ինտերտեքստից (արգեն ասվածը), պատմիչը ձգտում է ստիպողական տպավորման (*sommation*): Ի միջի այլոց, վաւաչ և բորբորիտոն անվաններն ունեն հարևան սեմաներ (տե՛ս

5 A. Greimas et J. Fontanille. *Semiotique des passions*. Paris, 1991, p. 158.

այս մասին է: Աղայան⁶), բայց պետք է նկատի առնել բորբորիտոն ածականի կիրառությունը V դարում, այսինքն կապը բորբորիտների աղանդի հետ, որի մասին որոշ տեղեկություններ ունենք Կորյունից, Վարք Մաշտոցում:

Ա, Բ, Դ նկարագրությունները երևան են հանում տատանումը: Միջնադարի համար և նույնիսկ այսօր, տարբեր պատմողական եղանակների միջև՝ օբյեկտիվը (գիտականը) և սուբյեկտիվը (վիպականը): Երկրորդը կազմում է մի, այսպես ասած, դեղարվեստական գրպան (զի առ յոյժ ցանկականի մոլեգնութեանն, ի բանսն որ զնմանէ՝ որպէս ի տեսութիւն շամբշուլթեամբ վառեալ էր...): Պերսոնաժը նախ հեռացված է, մեզ հայտնի է նրա ներքին աշխարհը (տե՛ս Փ ո լ ա գ յ ա ն⁷), հետո մոտեցված:

Նկարագրություն Ա.

Բայց վաւաչն այն և բորբորիտոնն Շամիրամ ի բազում ամաց լուեալ գգեգեցկութենէ նորա՝ ցանկանայր հասանել. այլ ոչ ինչ յայտնասսեւ զայսպիսիս իշխէր գործել:

Նկարագրություն Բ.

Բայց որչափ ի դիմացն էր նշանակեալ, ոչ այնչափ ի սպանանել զնա և ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ զբռամբ ածել, զի լցցէ զկամս ցանկութեան իւրոյ. զի առ յոյժ ցանկականի մոլեգնութեանն, ի բանսն որ զնմանէ որպէս ի տեսութիւն շամբշուլթեամբ վառեալ էր:

Նկարագրություն Գ.

Գայ հասանէ տագնապաւ ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ:

Նկարագրություն Դ.

Միանգամայն և ակն ունէր գիւթութեամբ վհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տուփական ցանկութենէն:

Ինչպես տեսնում ենք, 4 նկարագրություններից 3-ը վերաբերում են Շամիրամին⁸: Ա և Գ նկարագրությունները (զրո կիզակետումով, այսինքն հեղինակի տեսանկյունից) մատնացույց են անում ձեռնածուլթյան են-

6 Է. Ա ղ ա յ ա ն. Արգի հայերենի բացատրական բառարան. Երևան, 1976, էջ 202, 1360:

7 Մ. Փ ո լ ա գ յ ա ն. Մտահամակարգային լեզվաբանության դասախոսություններ. Երևան, 2000, էջ 198:

8 Շամիրամի պատմությունը մեզ ծանոթ է շնորհիվ Քթեզիասի (V դար Հ.Ք. առաջ, հուլյն պատմաբան և Արտաքսերքսես Մնեմոնի բժիշկ, Հնդկաստանի և Պարսկաստանի մասին հայտնի աշխատությունների հեղինակ) և Դիոդորոս Սիկիլիացուն (հուլյն պատմաբան Օգոստոս կայսեր ժամանակ, հուլյնագիր Պատմական գրադարանի հեղինակը, որը սկսվում է ամենահին ժամանակներից մինչև 60 թիվը Հ.Ք.-ից հետո): Բայց, ինչպես գիտենք, Խորենացին տալիս է Մար Աբաս Կատինայի անունը և ասում, որ օգտվել է արքայական արխիվներից:

Մեզ այսօր կոնկրետ հայտնի է, որ Շամիրամի ամուսինը՝ Սամի Արադը, թագավորել է 824-ից 810-ը: Նրա որդին Արադ Նիզարի III-ը դեռ երեխա էր, երբ նա մեռնում է և դահլիճ անցնում է նրա ամենասիրելի կնոջ՝ Սամամուրաթին (մեր Շամիրամը), օտարազգի (հայ ...) և թեթև բարքերի կին, որը, ինչպես պատմում է Դիոդորոսը, ուներ բնության ուժգին պահանջ: Ահա ինչու, ամուսինը կառուցել է տալիս հրաշք պարտեզները: Իսկ ինչ վերաբերում է սիրելիաներին, ահա ինչ է գրում Դիոդորոսը Պատմական գրադարանի 2-րդ գրքում. նա երբեք չցանկացավ ամուսնանալ օրինական ձևով, չկորցնելու համար իշխանությունը: Բայց նա ընտրում էր իր գործերից ամենազեղեցիկ տղամարդկանց և շնորհելուց հետո նրանց իր սերը, վերացնում էր նրանց:

թարկված պերսոնա՞՞, սեռական ցանկություն կամ քին ենթարկված անձ (դատողությունից զուրկ): Շամիրամը գտնվում է տրփանքի իշխանության տակ (գործողության հասցեագրողը (*destinateur*): Այս առիթով նշեմ, որ վերոհիշյալ նկարագրությունները կարելի է համարել ինտերտեքստից վերցրած և վերամշակված մեկնարանություններ, ինչպես քիչ առաջ նշված երկխոսությունները: Դրանք կախման մեջ են, իհարկե, տեքստի եղանակավորումից (*modalisation*): Ես կվերադառնամ այս հարցին երկրորդ մասում:

II. ԱՍՈՒԹՅՈՒՆ և ԺԱՄԱՆԱԿԱՑԻՆ ՌԵՖԵՐԵՆՑԻԱՑԻԱ

Վերատադրել իրադարձներ որևէ պատումի մեջ, նշանակում է ինքնաբերաբար հաշվի առնել 3 տեսակի ժամանակ և 2 տեսակի ռեֆերենտ:

1. Ժամանակները.

Ա. Արտաքին ժամանակը (օրացույցը): Որոշ գիտնականների կարծիքով (Ա. Կ ա Ր Ր Ի Ե Ր¹⁰, Ա. Մ ա լ խ ա ս յ ա ն¹¹), Մովսես Խորենացին իրեն թույլ է տվել որոշ խախտումներ՝ ասենք, երբ խոսքը վերաբերում է նախնական ընտանիքների ծագմանը: Արայի և Շամիրամի հանդիպումը տրամաբանորեն անհնարին էր ...

Բ. Տևողականությունը (պատմված գործողության ժամանակը), իրագարձների ժամանակագրությունը մեկը մյուսի համեմատությամբ, դրանց կազմակերպումը պատումում: 15-րդ գլխում այս առումով խախտումներ չկան, եթե հաշվի չառնենք որոշ մանրուքներ:

Գ. Պատումի ժամանակը. այն պահը, որում գանվում է պատմիչն ինքը (պատմիչի ներկան): Տեքստի ճշգրիտ մեկնաբանությունը կախված է այս ժամանակից: Այն ներկայանում է որպես երկրորդ մակարդակի խոսք և շատ դեպքերում սողոսկում առաջին մակարդակ՝ ղուտ պատմությունը:

2. Ռեֆերենտը ըստ դիտորդի տեսակետի.

Ա. Ներքին տեսակետը՝ պատումի ռեֆերենտը:

Բ. Արտաքին տեսակետը՝ ռեֆերենտը ըստ խոսակիցների (հեղինակ-ընթերցող) դբադեցրած տեղի:

Ժամանակների Բ կետը, ընդհանրապես, բոլոր պատմողական տեքստերի համար, բավականին բարդ կազմակերպություն է, այն հիմնված է բայական ժամանակ – կերպ կատեգորիաների վրա: Ավելի ճշգրիտ հասկացություն համար, ինչպես եմ ես պատկերացնում կարգավորող հարաբերությունները:


Ժամանակային կարգավորմանը զուգահեռ, նկատի ունենալով իր խոսքի ընդունելությունը, պատմիչին հարկ է ընտրել մի հեռանկար, բայական կերպի հետ միաժամանակ այս հեռանկարը եղանակավորում է իրագարձների մոտեքը պատուհան, այսինքն իրագարձի մեջ գտնվող ինֆորմացիա-

9 Ինչպես Մյորսոն Գամյուի «Օտարականը» վեպում:

10 A. C a r r i e r e. Moïse de Khoren et la généalogie patriarcale. Paris, 1896.

11 Ա. Մ ա լ խ ա ս յ ա ն. Մովսես Խորենացի. Հայոց պատմություն (առաջաբան). Երևան, 1981:

յի ռեգուլիացիա (կանոնավորում): Սա տրամաբանորեն առաջացնում է խոսքի լարվածություն: Ահա 3 հնարավոր հեռանկարները.



Սխեմա 2

1. Ավարտված իրադարձը վերցված է իր վերջնային փուլում կամ էլ ամբողջովին, գլոբալ ձևով: Սա ռետրոսպեկտիվ (հետադարձ) ընկալումն է:

2. Իրադարձը վերցված է իր սկզբնային փուլում: Սա պրոսպեկտիվ ընկալումն է:

3. Իրադարձը վերցված է իր իրականացման ընթացքում: Սա ինսպեկտիվ ընկալումն է:

Առաջին ընկալումը ենթադրում է դիտում դրսից. իրադարձը փակ է: Երկրորդը՝ կիսով չափ դրսից. իրադարձը փակվելու վրա է: Երրորդը՝ դիտում ներսից, խոսող անձի ներկայությունը իրադարձը բաց է:


15-րդ գլուխը բացվում և փակվում է հետադարձ ընկալմամբ և զատող կողմնորոշմամբ (խոսող անձը ներկա չէ ասույթում և օգտագործված է անցյալ կատարյալը):

Ա. Պատուհանի բացումը.

Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինոսի խնամակալեաց իւրոց հայրենեացն, նոյնպիսում շնորհի արժանաւորեալ ի Նինոսէ՝ որպես և

Հայրն իւր Արամ: Բայց վաւաչն այն և բորբորիտոնն Շամիրամ ի բագում ամաց լուեալ զգեզեցկութենէ նորա՝ ցանկանայր Հասանել. այլ ոչ ինչ յայտնապես զայսպիսիս իշխէր գործել:

Յանկանայր Հասանել բայական շարույթն ունի այստեղ պանտոնիմի դործառույթ (մի բայ, որն ամփոփում է, և ինքն իր մեջ արդեն պարունակում մնացած բոլոր իրադարձները):



P: պրոսպեկտիվ տեսանկյուն (նայվածք)
i: ինսպեկտիվ տեսանկյուն
R: ռետրոսպեկտիվ տեսանկյուն

Սխեմա 3

Բ. Պատուհանի փակումը.

Եւ որ ինչ յաղազս Արայի կարճառօտիւ և այսչափ շատ լիցի յիշատակել: Սա կեցեալ ամս՝ ծնաւ զԿարդոս:

Ամեն մի իրադարձ, դնահատված իր հիմնական (պատմական) դաշտում, sui generis, ռետրոսպեկտիվ է: Այս պատճառով է, որ պատմական ներկան թվում է հակասական, քանի որ այն փորձում է անհետացնել հետադարձութիւնը իրադարձից, պատմական տեքստի զդացումը, հիշատակումը, ինչ-որ կերպ խանդարում է իրադարձի թանձրացմանը: Բայց մյուս կողմից էլ, նույն ներկան հնարավոր է դարձնում ինսպեկտիվ ընկալումը և եկող իրադարձների ստուգումը, զեկավարութիւնը: Կտրվելով իր սկզբից և վերջից, ներկան դանդաղեցնում է իրադարձը և հնարավոր դարձնում դրանց տեսողականացնում (visualisation) տպագրումից (impression) առաջ: Այնուհետև դրանք արձանագրված են (enregistré) և ուղարկված արխիվ (archive):

Վառ և ցցուն դարձնելու համար տենչանքի ողբերգութիւնը (ասութիւնն տարածքը այստեղ նաև ողբերգութիւնն տարածքն է) և միևնույն ժամանակ, ծածուկ ձևով զետեղելու համար դադափարական հանդուցը, խորենացին մտցնելու է պատումը տեսչական ընկալման մեջ: Ներկան, նույնիսկ պատմական ներկան, կանխենթադրում է խոսող անձի ներկայութիւնը խոսքի պահի տարածքում:

Այս տեղաշարժը աղավաղում է պատմաբանի խոսքը մի ուրիշ պատճառով ևս, այն է՝ հանդիպումը վիպական խոսքի հետ: Հիշեցնեմ, որ Հերոդոտը իր «Հեաագոտութիւնում» նույնպես տալիս է իր անունը հենց առաջին տողից: Բայց նա անում է դա երրորդ դեմքով, այսինքն՝ ուղղակի հա-

ղորդակցումից դուրս. Սա Հերոզոտ Թուրոսացու հետազոտությունների զեկուցումն է:

Այսպիսով, հույն պատմաբանը տարբերություն է մտցնում Հերոզոտ անձի և Հերոզոտ պատմաբանի միջև: Ճիշտ է, Հերոզոտ անձը մնում է, համենայն դեպս, ներկա ՍԱ ցուցականի շնորհիվ: Խորենացու մոտ, ընդհակառակը, երկու ատյանները խառնված են իրար:

Ստույգ քննություն համար հարկ է ուրեմն նախօրոք տեղարկել սույն ատյանները: Խորենացին դերադասում է անձամբ մտնել պատում (տե՛ս պատուհան 2-ը): Իրականացված գործողությունը կարելի է նկարագրել դիմելով ինֆորմատիկայի լեզվին. պատմիչը նախ պատճենահանում է (copier) անցյալի իրագարձները և հետո այն կցում (coller) խոսքի պահին. նրա նպատակն է, թատերացնել իրագարձները: Սա նշանակում է, որ նա նախ գնում է ինֆորմատիվ տվյալների վայր (site visite) և վերադառնում է ջի բացման վայր (site d'accueil), այսինքն ստեղծագործական գործընթացի մեջ գտնվող տեքստ: Դժվարին ճանապարհորդություն, եթե հաշվի առնենք, որ Խորենացին բաժանված է Արայից և Շամիրամից մոտավորապես նույնքանով որքանով մենք իրենից:

Այսպիսով, ոչ թե խոսող անձն է տեղաշարժված դեպի անցյալը, այլ անցյալն է վերամշակված որպես ներկա: Պատճենահանում-կցում օպերացիաները կատարված են պատմիչ զրուցաբանի կողմից. պատմիչ գրողը (պատմաբանը) մնում է իր դաշտում՝ էջի բացման վայրում, որը պատմիչ զրուցաբանի տարածքն է, տարբեր է խոսքի պահի տարածքից (պատմիչ գրողի տարածքը), չնայած որ երկու պատմիչներն էլ պատկանում են նույն կոնֆիգուրացիային: Դիմելով համանմանություն, ես կասեի, որ առաջինը ներկայացնում է բեմը, երկրորդը՝ սրահը: Բեմ հասկացությունը ես վերցնում եմ լայն իմաստով բեմը՝ այսինքն տեքստը: Պատմիչը իջեցնում է իրագարձները (copier) դեպի խոսքի պահ (coller). Ընթերցողը բարձրացնում է իր in absentia (աննշույթ) իրականությունը (copier) դեպի անցյալի իրագարձները (coller): Մենք կտեսնենք, թե ինչպես որոշ պատճենահանված իրագարձներ կցված են առանց մշակման, ինչպես կան: Մյուսները կրում են վերամշակման ակնհայտ հետքեր:


Պատումը 15-րդ գլխում կառուցված է 3 բայական շարքերի շուրջ, տարբեր հեռանկարներով. առաջին շարքը (1-ին պարբերությունը) անցյալ կատարյալներով, որոնք արձանագրում են Դա-ն (նախորդող անցյալ) և պատասխանում որտեղից ես գալիս հիմնավորող (էական) հարցին, երկրորդ սերիան (2-րդ, 3-րդ, 4-րդ պարբերությունները) ներկաներով, որոնք արձանագրում են Սա-ն (այժմեականացրած անցյալ) և պատասխանում ի՞նչ ես անում հարցին, երրորդ սերիան վերստին անցյալ կատարյալներով, որոնք արձանագրում են մի երկրորդ Դա (հեռացող անցյալ) և պատասխանում ու՞ր ես գնում հարցին (5-րդ պարբերություն):

Փոքրիկ պատուհանի // մանրակրկիտ քննությունը ցույց է տալիս մի երրորդ բացում և փակում.

Ա. Բացում 2

Բայց վառաչն այն և բորբորիտոնն Շամիրամ ի բազում ամաց լուեալ զգեզեցկուլթեն է նորա՝ ցանկանայր հասանել, այլ ոչ ինչ յայտնապես զայս-

պիսիս իշխեր դործել: Իսկ յետ վախճանելոյն, կամ փախստական լինելոյն Նինոսի ի Կրետե, որպէս հավանեալ եմ, համարձակ պատուելով Շամիրամայ զախան՝ առաքէ հրեշտակս առ Արայն դեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստամբ պարգևաց, դալ առ նա ի Նինուէ, կամ առնուլ կնուլթեան և թադաւորել ի վերայ ամենայնի՝ որոց տիրէր և Նինոս, և կամ կատարել զկամս ցանկուլթեան նորա և դառնալ մեծաւ պատարագօք և խաղաղուլթեամբ ի տեղի իւր:



Սխեմա 4

Բ. Փակում 2

Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ զամենեսեան՝ դադարեցուցանէ զխազմն:

Պարզվում է, որ փոքրիկ սլատուհանը ամբողջովին տրամադրված է Շամիրամին: Երկու տեղիկ¹² բայեր, երկուսն էլ լարվածության տակ առնված (ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ), առանձնանում են սույն երկու միկրոհատուլթնեւրում՝ առաքէ և դադարեցուցանէ: Երկուսն էլ ունեն Շամիրամը որպէս ենթակա, բայց լրացումները տարբերվում են:

Որպէս անցողական երկարժույթ բայ, առաքէ բայը իսկապէս չի ներգործում իր երկրորդ օբյեկտի (լրացման) վրա, իսկ Արան միմիայն երրորդ ակտանտ է: Դադարեցուցանէ երկարժուլթային անցողական բայը ուղղակիորեն ներգործում է օբյեկտի վրա, բայց այն արգեն նույնը չէ: Ատիպված ենք վերանայել մինչ այժմ առաջարկված պատմողական ծրագիրը (տե՛ս մաս առաջին): Այն, ինչ թվում էր սիրային սյուժե, այժմ վերած-


12 Հետեւելով Գարբի տեսությանը (H. B. G a r e y. Verbal aspect in French.- Language N 33, 1957), ես անվանում եմ տեղիկ բոլոր այն բայերը, որոնք իրենց սեմանտիզմում ունեն այնպիսի ավարտվածութիւն, որ պրոցեսը շարունակել այլևս չի կարելի: Գարբն առաջարկում է հետեւյալ տեստը.

Եթե Ա-ն (անորոշ դերբայ) անելու վրա է և այն ընդհատվեց, պրոցեսը իսկապէս տեղի ունեցավ:

Եթե պատասխանը այո է (օրինակ՝ քայլել), ապա բայը ատելիկ է, եթե պատասխանը ոչ է, ապա բայը տեղիկ է:


վում է գոեհիկ նվաճողական պատերազմի: Դադարեցուցան է զխազմն բայական շարույթը պարզապես մի մեղմասուլթյուն է նվաճել բայի փոխարեն, եթե հաշվի առնենք հաջորդ գլուխը.

$$PN = F \{ S1 \rightarrow (S2 \cap O) \text{ ուր } O = \text{Հայաստան} \}$$



Սխեմա 5

Վերադառնանք ներկաների սերիային՝ այն այսպես ասած շրջում է իրադարձների հոսանքը. դրանք այժմ գալիս են ապառնուց և ուղղվում դեպի խոսքի պահը: Պատմիչը արձանագրելու է այդ իրադարձները ներկայում (կուրսիվ խոսք) ոչ թե որպես եկած, այլ որպես եկող իրադարձներ:



Սխեմա 6

Ես չեմ անդրադառնա պատմական ներկայի տարբեր մեկնաբանություններին: Համենայն դեպս, ասել, ինչպես Ա. Բոնարը, թե պատմական ներկան «վերցված է պարզապես նշույթային էկոնոմիայի կարիքով», քանի որ այն «թեթևացնում է արտահայտությունը, խուսափելով անցյալ կատարյալի հնացած ձևերի կիրառումից»¹³, ինձ թվում է դա նշանակում է պատմիչի աշխատանքը մանկական վարժուկային վերածել: Ինչպես նաև, համարել, թե պատմական ներկան լոկ մի ժամանակավոր կիրառում է (*emploi par défaut*) այն իմաստով, որ կոնտեքստից ելնելով, այլևս անցյալ կատարյալի կարիքը չի զգացվում, նշանակում է ջնջել այն ամենը, ինչ պատկանում է ասուլթյանը (խոսքի պահի իմաստը):

13 H. B o n n a r d. Grand Larousse de la langue française. Paris, 1976, p. 4597.

Շատ ավելի տրամաբանական է, ըստ իս, Վիյոմի¹⁴ առաջարկած մեկնաբանությունը: Նա այն կարծիքին է, որ պատմական ներկան իրականում երկու տարբեր մակարդակների բախման արդյունք է. առաջինը՝ գլխավորը վերաբերում է իսկապես իրադարձներին և պերսոնաժներին, երկրորդը՝ ստորադասականը վերաբերում է հեղինակին և ընթերցողին: Անցյալի ժամանակները այսպիսով նշում են գլխավոր Ֆիկցիան, այնինչ պատմական ներկան ներառում է նաև ստորադասականը:

Երկրորդական Ֆիկցիայի ներկայությունը հաստատում է պատմական ներկան որպես լիովին ներկա՝ համապատասխանություն ղեկիտիկ (ցուցային) կենտրոնի հետ (խոսքի պահ):

Պատմիչը օգտագործում է 5 բայ ներկա ժամանակով նկարագրելու համար ճակատամարտը .

Հարկանի , մեռանի , առաքէ , գտանեն , հրամայէ

Առաջին երկու ներկաները որպես գործող անձ վերցնում են Արային, իսկ մյուս երկուսը՝ Շամիրամին: Հարկանի, մեռանի, տելիկ բայերը կետային, տեղն ու տեղը իրագործված գործընթացներ են և տրված են կրավորական սեռով: Սույն երկու իրադարձներն, ուրեմն, արձանագրված են համարյա իրենց փակող սահմաններով՝ կիսաբաց պրոցեսներ են (ներկայի պատճառով). նշանակությունը մոտ է անցյալ կատարյալի նշանակությանը. մոտ անցյալում սկսված իրադարձը վերջանում է ներկայում: Պատմիչը, ըստ երևույթին, մի կողմից էլ ցանկանում ծավալուն ձևով նկարագրել Շամիրամի հաղթանակը (պրծավ, այլևս չխոսենք ...), մյուս կողմից էլ ձգտում է էպոսի ոճի մեջ չմտնել՝ հերոսի (հին հունական իմաստով) մահը, օրինակ Իլիականում: Աս հնարավոր տարբերակ էր, քանի որ, հիշեցնեմ, թագավորը այդ ժամանակ քայլում էր իր զինվորների առջևից (Շամիրամին փրկում է այն հանդամանքը, որ նա կին է):

Կտրված իրենց սկզբից և համարյա (վերջը սպասվում է) իրենց վերջից՝ վերոհիշյալ երկու պրոցեսները ինչ-որ կերպ ստեղծված են որպես հանդես ցուցադրվելու (տեսնելու և ցույց տալու հաճույքը) համար, այստեղ անցնում ենք երկրորդ մակարդակին: Բայական դինամիկական դանդաղեցված է, երկու իրադարձները գտնվում են լարվածությունից տակ, քանի որ չեն բացված (open), դրանց կազմի մեջ մտնող տարբեր փուլերը դուրս չեն բերված (extraction), անվանված և նկարագրված: Դրանք տրված են նվալեցված (reduction):


Ասուլթյան (խոսքի պահ) մուտքը (insert), պատմաբանի գիտական խոսքը թողնում է հետքեր բոլոր մակարդակների վրա: Ես անձի ներկայությունը կանխենթադրում է միաժամանակ տարածքային այստեղը և ժամանակային հիման, այսինքն անգրիսոսքի (metadiscours) դաշտ է, եղանակավորման օպերացիա: Դրանք ընդգրկված են պատմիչի միջամտությունից մեջ, էթոսին (անկեղծության կարիքը հին հռետորիկայում) գուգահեռ.

Իսկ յետ վախճանելոյն, կամ փախստական լինելոյն Նինոսի ի Կրետե, որպէս հավանեալ եմ, համարձակ պատուելով Շամիրամայ ղախտն՝ առաքէ

14 M. V u i l l a u m e. Grammaire temporelle des récits. Paris, 1990.

Հրեշտակա առ Արայն գեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստմամբ պարգևաց, գալ առ նա ի Նինուէ, կամ առնուլ կնութեան և թագաւորել ի վերայ ամենայնի՝ որոց տիրէր և Նինոս, և կամ կատարել զկամս ցանկութեան նորա և գառնալ մեծաւ պատարագօք և խաղազութեամբ ի տեղի իւր:

Ա1/Ա2:
պրոցեսի
սահմանները



Սխեմա 7

Պրագմատիկ տեսանկյունից որպես հավանեալ եմ կանխենթագրում է մոտավորապես հետևյալ ասույթը. ես հետադոտոլթյուններ եմ վարել և ձեռքիս տակ ունեմ (փաստաթուղթը գոյուլթյուն ունի) պահանջված տեղեկությունները (ինտերտեքստ իգրեքը): Որպես հավանեալ եմ ենթագրում է մյուս կողմից. ես համաձայն չեմ ասվածի (ինտերտեքստ իքս) հետ:

Նույն պրագմատիկ տեսանկյունից, պետք է հաշվի առնել մի երկրորդ հանգամանք. այնտեղ, որտեղ կա ես, ինքնաբերաբար կա դու: 15-րդ գլխում գործ ունենք 3 տեսակի դու-ի հետ.

1. Մի առաջին խոսակից - ընթերցող, որը Սահակ Բագրատունին է: Տեքստում չկա տարաձայնության ոչ մի հետք տեղեկացնող (Խորենացին) և դիտող - ընթերցող (Սահակը) ատյանների միջև: Պատմությունը բացվում է, հիշեցնեմ, Սահակին հասցեագրված մի նամակով.

Պատասխան թղթոյն Սահակայ, և խոստումն կատարել զհայցուածս նորա:

Որպես Պատմության պատվիրատու, Սահակը ներկայացնում է պատմական խոսքի վավերացնող ատյանը, ինչպես հովանավորն այսօր: Բայց նա միաժամանակ ընթերցող է, այսինքն ընդունող ատյանը, և որպես այսպիսին, նա նույնպես պետք է որ հավանի, հաստատի պատմաբանի գաղափարական աշխարհը: Խորենացու բոլոր ջանքերը գնում են այս ուղղությամբ: Բայական սերիաների 3 փուլերը (էջ 8) վերաբերում են Խորենացուն և Սահակին ևս. ո՞վ ես, ի՞նչ ես անում, ու՞ր ես գնում ...

Պատմիչի և գիտնականի պարտքն է, որ ստիպում է Խորենացուն դուրս գալ իր սեփական տարածքից՝ արտապատմողական դաշտից՝ մտնելու համար ներպատմողական դաշտ: Նա դիմում է նույնիսկ անդրկողային միջոցների. անցնում է գրավոր ուղուց բանավորին, ավելի ճիշտ՝ համատե-

ղում դրանք, քանի որ իր միջամտությունն նպատակը խոսող անձին և խոսակցին անջատող տարածքը վերացնելն է: Սրանով իսկ խորենացին ինքն իրեն ներկայացնում է որպես հեղինակ, կառուցում ինքն իր պատկերը և հրավիրում Սահակին վավերացնել այն: Առանձնանալով իքս ինտերտեքստից, պատմիչը բացահայտում է մեր առջև իր վարպետությունը: Գրող-պատմաբանը (անդրխոսքի հեղինակը) ինչ-որ կերպ առանձնանում է պատմիչ-պատմաբանից. ինչպես ասում էի, նա իրեն տեղավորում է սրահում, հսկողության տակ վերցնում իրադարձները: Որպես պատմական տվյալների աղբյուր, նա ԳԻՏԻ, և ինչպես կտեսնենք, դիմում է կտրվածքների (ցենզուրա), այնինչ պատմիչ-պատմաբանը բավարարվում է ՏԵՍՆԵ-ԼՈՎ և ԱՍԵԼՈՎ:

2. Երկրորդ խոսակցից-ընթերցողը՝ չվավերացված հասցեատերը, ինչպես կասեր Կատրին Կերբրատ-Օրեկիոնին¹⁵: Սա ինտերտեքստ իքսի հեղինակն է (գուցե Մար Արասը):

Որսկես հավանեալ եմ այս դեպքում կանխենթադրում է վեճ (կանխենթադրույթը մնում է կիսատ) ոչ միայն պատմական կոնկրետ հարցի շուրջ, այլև հենց պատմական խոսքի կոնցեպցիայի շուրջ: Սա վավերացման մերժում է: Նինոսը (ասեմ նախ, որ սույն անունը Նինիվեյ ասորական քաղաքի հունական անվանումն է) չի վախճանվել, ինչպես ասում է ինտերտեքստ իքսը (գրվող զեդ տեքստի առաջը), այլ փախուստի է դիմել ... Սա կարող է թվալ ահեթեթ մանրուք, եթե չլիներ ենթադրվող միտքը. ես ուրիշ աղբյուրներ ունեմ, ավելի վստահելի ...

Այստեղ ինտերտեքստը ընդհանրապես հարստանում է ևս մի տեքստով՝ ինտերտեքստ իգրեքով, որի մասին արդեն խոսել եմ: Ո՞ր մեկը ... Ըստ երևույթին Ալեքսանդրիայում ձեռք բերած գիտելիքները: Շատ հավանական է, որ Թեոփիլոս եպիսկոպոսն չէր հասցրել ամբողջովին այրել հանրահայտ գրադարանը՝ Սերապեոնը: Եփիֆանոս Կիպրեցին պատմում է, որ այնտեղ կար մոտավորապես 50000 մագաղաթ: Ինչևէ, կարևորը խորենացու կատարողական ձգտումն է: Այն եղանակավորում է նաև տեղանվանական աշխատանքը՝ պատմական խոսքի վավերացման մի ուրիշ միջոց:

Գայ հասան է տագնապալ Ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ:

Հարկ է այստեղ ավելացնել, որ տարածքային տեղայնացումը, 15-րդ գլխում, տեղի է ունենում գրող - պատմաբանի տեսանկյունից (նա ԳԻՏԻ, ինչպես ասել էի) ըստ խոսքի պահի կետի, անուանեալ ես կիսառետրոպեկտիվ (կամ էլ կիսահինսպեկտիվ) բացվածքով (Ֆրանսերեն, օրինակ, կթարգմանեի *passee composé-ով*): Մենք այստեղ ժամանակավորապես թողնում ենք բեմը (սա ժամանակային միջանկյալության հետաքրքիր օրինակ է): Միևնույն ժամանակ Ի դաշտն Արայի շարույթը անցնում է որոշյալության մի փուլից՝ մասնավորումը հաջորդին՝ ընդհանրացումը. առաջինը՝ հակադարձ որոշյալություն (*cataphorique*), ստանում է երկրորդի հարաբերության որոշիչի գործառույթ: Այդ ժամանակաշրջանում դաշտը զեռ Արարատյան չէր կոչվում: Ահա ևս մի օրինակ.

15 C. Kerbrat Orecchioni. Les interactios verbales. T. 1, Paris, 1990.

Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ զամենեսեան՝ դադարեցուցանէ զիսագմն:

Արայի թագավորութիւնը չէր կարող այդ ժամանակ անվանվել երկիր Հայոց:

3. Ապագայի ընթերցողը, փառավորման վավերացնողը: Խորենացին, ինչպես ասում էի, Պատմութեան հենց առաջին տողից զգում է իր աշխատանքի հսկայական նշանակութիւնը:

Խոսքի պահի ճշող ներկայութիւնը ճանաչողական և բարոյական (épistémique et déontique) եղանակավորման ելակետն է: Հետևանքը տեքստի ընդգծված վերորոշյալութիւնն է (surdetermination) կերպարների և իրադարձների կիզակետումը, այսինքն ցուցական մեկնաբանութիւնը (commentaire deictique): Ինչպես Բենվենիստն¹⁶ էր գրում, ցուցային նշանները «կանխենթադրում են օբյեկտը մատնացուց անող ժեստը, երբ միաժամանակ ասվում է բառը»: 15-րդ տողում, պատմիչը մատնացուց է անում Շամիրամին և անունից (որն արդեն ինքնորոշյալ նշույթ է) զատ ավելացնում է ԱՅՆ ցուցականը: Սույն երևույթը կարելի էր համարել պարզապես մի հելլենիզմ, բայց այն լեզվային (խորքային) երևույթ է: Մասնավորող կինետիզմին փոխարինում է ընդհանրացնող կինետիզմը՝ ցուցականը ընդլայնված է և վերցնում է որոշյալ հոգի գործառույթ: Հին հունարենում մատնացուց արված հեռուն ստանում էր բացասական հարանշանակութիւն. Ο ΑΥΤΗ ΕΚΕΙΝΟΪ (այն մարդը) շարույթում ΕΚΕΙΝΟΪ ցուցականը ուներ բացասական տիպիֆիկացիայի հարանշանակութիւն:

Բայց վաւաչն այն և բորբորիտոնն Շամիրամ ի բազում ամաց լուեալ զգեղեցկութենէ նորա՝ ցանկանայր հասանել. այլ ոչ ինչ յայտնադես զայսպիսիս իշխէր գործել:

Սա, այսպես ասած, հեռացնում է կերպարին ընթերցողից, զրկում համակրանքից. Շամիրամը, ինչպես ասում էի, ներկայացնում է առասպելը, որը հարկ է ամեն կերպ տապալել: Մի կողմից Խորենացու հայրենասիրութիւնն է այդ պահանջում, մյուս կողմից էլ գիտական խոսքի օբյեկտիվութիւնը: Պատմիչին հավանաբար ծանոթ էր Պատմի (Տե՛ս Ռեսպոնսիվիւկա, 330դ, 359դ, 588դ) հեգնանքն այն պոետների հանդեպ, որոնք, ինչպես Հոմերոսը, «գրել են սուտ առասպելներ»: Խորենացին այս առումով պայքարի մեջ է մտնում ոչ միայն ասորական, այլև հայրենական հեթանոսական ավանդույթների դեմ, որոնք հավանաբար դեռ կենդանի էին V դարում: Առասպելները ճշմարտացի չեն, Խորենացին գիտի գա... Բայց չէ որ ինքն էլ է Պատմութիւնով ստեղծում մի ուրիշ առասպել՝ հայ ազգի առասպելական ծագումը: Այս պատճառով է, որ Խորենացին ղեկնստրուկցիայի իր աշխատանքում մինչև վերջ գնալ չի կարող: Ըստ Միրսես Էլիազի¹⁷, առասպելը, որպես մի եղելութիւն, որը տեղի է ունեցել Մեծ ժամանակի արշալույսին (աստվածային ժամանակաշրջան), վերածվում է կրկնվող մոդելի, անտապալուն փաստարկի: Առասպելը միաձուլվում է

16 E. B e n v e n i s t e. Problèmes de linguistique générale. Paris, 1974, p. 79–88.

17 M. E l i a d e. Images et symboles. Paris, 1952.

Համայնական մտքին, հիմնում այն: Չնայած գիտական նպատակին, Պատմությունը աներևակայելի է առանց առասպելի կանխենթադրված ներկայություն: Խորենացին քանդում և միևնույն ժամանակ ընդօրինակում է ասորական առասպելը: Սա նույնպես Սահակի գաղափարական պահանջն է: Սույն դիրքորոշումը համարյա տեսանելի է դառնում, երբ պատմիչը նկարագրում է Շամիրամի խորամանկությունը:

Իսկ ի գրգռել միևսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ, քինախնդիր լինել մահուանն Արայի՝ ասէ. «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվերս նորա, և կենգանասցի»: Միանգամայն և ակն ունէր դիւթութեամբ վհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տափական ցանկութենէն: Իսկ իբրև նեխեցաւ դի նորա՝ հրամայէ ընկենուլ ի վիհ մեծ և ծածկել. գմի ոմն ի հոմանեաց իւրոց զարգաբեալ ունելով ի ծածուկ համբավէ զնմանէ այսպէս. «Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացու ցեալ լցին զփափագ մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք և կամակատարք»: Կանգնէ և նոր իմն պատկեր յանուն դիւց, և մեծապէս զոհիւք պատուէ, ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս զօրութիւն աստուածոցն կենգանացուցին զԱրայ: Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ զամենեսեան՝ դազարեցուցանէ զխազմն:

Իբր թէ այս որոշիչ արտիկլը (հոդը) այստեղ պետք է որ ներկայանար առանց ցուցականի. աննշույթ կառուցվածքը այդ դեպքում կլիներ. իբր թե զօրութիւնն աստուածոցն կենդանացուցին զԱրայ: Պատմիչը ավելացնում է ցուցականությունը և այսպիսով հեզնանքով մեկնաբանում իրադարձը: Ասույթի խոսող անձը (Շամիրամը) և ասության խոսող անձը (խորենացին) տարբեր են:

Բայց չէ՞ որ Խորենացին ներկա է տեքստում երկու ատյաններով. ո՞րն է այդ դեպքում այստեղ խոսում՝ պատմիչ-գրողը, քանի որ պատմիչ-պատմողին չի տրված տեքստը եղանակավորել: Սա պատասխանի միայն սկիզբն է, պատմիչ-գրողը, ինչպես տեսանք՝ ժխտում է ինտերտեքստ իքսը և գերադասում ինտերտեքստ իգրեքը: Սա նշանակում է, որ եղանակավորումը ինչ-որ կերպ զալիս է իգրեք տեքստից, որն իր հերթին... Չբարդացնենք հարցը. պատմական տեքստերը, համարյա բոլոր դեպքերում, բազմաձայն խոսքեր են: Արայի հեզնանքով լի «հարությունը» նկարագրված է մի ամբողջ գաղափարական համայնքի կողմից: Շատ հնարավոր է, որ ինտերտեքստ իգրեքը, ինտերտեքստ իքսին հակառակ, բավական նոր է և հետևում է քրիստոնեական գաղափարախոսությունը:

Ջարմացնում է, համենայն դեպս, հայ մարտիկների միամտությունը: Այլապես ինչպես բացատրել Շամիրամի համոզվածությունը: Հրամայեցի բայը և ապառնի ժամանակի կիրառումը զարմացնում են իրենց վճռակալությունը: Քանի որ Շամիրամը գտնվում էր ուրարտական հողի վրա, գուցե և տեղյակ էր անմահության մասին ուրարտական առասպելներին¹⁸:

18 Սումերական, ուրարտական, խեթական առասպելները նշում են անմահության ծառի ներկայությունը գրախտային պարտեզում, Վան լճի շրջակայքում (հնարավոր է, որ Վան անունը սումերական Ան աստծո փոխակերպված տարբերակն է): Ուրարտական պե-

Նրան հավանաբար արդեն մանկուց ավանդել էին բաբելոնական «գաղտնիքները» ... Հրամայեցի բայը, ի միջի այլոց, այստեղ նշում է ոչ այնքան աստվածներին արված հրամանը, ինչքան Շամիրամի իրավունքը (սովորական երևույթ) այդպիսի հրամաններ տալու: Նույն տրամաբանությունը է, որ նա օգտագործում է մեղմասութային հրամայականը.

... վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք և կամակատարք ...

Պարտիցիպ-ածականը (նույն կիրառումը գոյություն ունեւ լատիններենում) և օժանդակ բայը ներկայում նշում են իրականում համոզվածություն և պարտավորություն: Պարզ է, որ հայ մարտիկների համար «Հարույթունը» իսկապես տեղի է ունեցել: Նրանք կիսում են, ըստ երևույթին, նույն համոզմունքները, ինչ Շամիրամը: Կանգնեցված արձանը պատասխանում է տրամաբանորեն հայ մարտիկների սպասմանը ևս. հին Եգիպտոսում և Ասորեստանում աստվածները բնակվում էին արձաններում:

Ուղղակիորեն թե անուղղակիորեն զգացվում է ինտերտեքստերի ազդեցությունը: Այս առումով հարց է ծագում. Արայի «Հարույթունը» (կախարդական արարողությունը), ինչպես այն նկարագրված է, կարող է լինել իքս ինտերտեքստի վերամշակված տարբերակը ... և գուցե այն ոչ թե նկարագրություն էր, այլ պատում կամ էլ մենախոսություն: Ենթադրենք (բոլորովին հնարավոր աշխատանք), թե պատմիչը վերածնվորում է այն որպես նկարագրություն և գնում որպես հետին պլան՝ երկրորդական երևույթ: Համարյա ամբողջ տեքստը կառուցված է հստակորեն առանձնացված իրադարձների վրա (հստակ սահմաններ): Բայց կան երկիմաստ միկրոհատույթներ. ինչպե՞ս բացատրել, օրինակ՝ միանգամայն մակբայր և հաջորդող անցյալ անկատարը. խոսքի պահի հարաբերությունը (S)՝ ցուցական կիրառում, թե անցյալի իրադարձների հարաբերությունը (R)՝ հարակրկնական (anaphorique) կիրառում:

Միանգամայն և ակն ունէր գիւթութեամբ վհկութեան իւրոյ կենգանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տուփական ցանկութենէն:


դումներում հայտնաբերված առարկաներում ծառի մոտիվը հաճախական է: Կողքում, րնդ-հանրապես կանգնած են կամ թագավորներ, կամ էլ աստվածուհիներ: Մի մշակույթից մյուսն, ուրեմն, համառոտ են վերադառնում են անմահության և աստվածների միջամտության (ուղղակի խոսքը աստծո հետ) թեմաները: Աստծուն հասնում ես կամ ծառի, կամ սանգուղջի կամ էլ լեռան զազաթի միջոցով:

Դրախտի առասպելը Դիւմունը արգեն ներկա էր սումերական մատյաններում (Ենուամ Ելիլ), օրինակ Ենկիլի և Նինուրսագի պատմությունում:

Անմահության որոնման վրա է կառուցված, օրինակ, Գիլգամեշի առասպելը. 6-ից 11-րդ մատյաններում իշտարը առաջարկում է Գիլգամեշին դառնալ իր սիրեկանը, բայց Գիլգամեշը մերժում է անվանելով իշտարին պոռնիկ: Զայրացած աստվածուհին խնդրում է Անուին (Ան գլխավոր աստվածը) Գիլգամեշի դեմ ուղարկել Երկնային ցուլին: Գիլգամեշը և իր ընկեր Ենկիտուն հաղթում են ցուլին, բայց Ենկիտուն հիվանդանում է և մեռնում: Հուսահատ Գիլգամեշը որոշում է գնալ խորհուրդ առնելու Ուտնապիշտիմից: Երկար և դժվարին փորձություններից հետո, նա հասնում է Աստվածների պարտեզը, այստեղ հանդիպում Սիդուրիին (աստվածների սպասարկուհուն), որը նրան բացատրում է, որ հետագա անապարհը պետք է անցնել մահվան ծովով: Վերջապես Գիլգամեշը գտնում է Ուտնապիշտիմին, որը նրան պատմում է համաշխարհային ջրհեղեղի պատմությունը: Նա Գիլգամեշին հրավեր է նետում 7 օր և 7 գիշեր անքուն մնալ: Գիլգամեշը պարտվում է, բայց Ուտնապիշտիմի կինը օգնում է նրան ձեռք բերել հավերժական երիտասարդություն տվող բույսը: Վերադարձի ճանապարհին Գիլգամեշը թողնում է այդ բույսը մի օձի: 12-րդ մատյանում (մի ուրիշ տարբերակ) Ենկիտուն հարույթուն է առնում և ներգալ աստվածը պատմում է Գիլգամեշին անմահության բոլոր գաղտնիքները: Տե՛ս պատկերները (էջ 217, 218, 219):

Ցուցական կիրառումը - սիտուացիոն կողմնորոշումը, ինչպես ասում է Կյուլիոլին¹⁹, կշեռտի պատումի թատերացումը, մատնացույց կանի բեմը ապարտե-ով (երբ դերասանը խոսում է ինքն իր հետ, ներկաներից գաղտնի²⁰ պատումը իրագործված կատաֆորիկ ձևով) հարակրկնութունը (անաֆորա)՝ Ա ← Բ հակառակ ուղղությամբ Բ ⇒ Ա / մոտավորապես հետևյալ խոսքերի մեկնաբանությունը. Միանգամայն և ական ունեմ իմ վհկութեամբ կենդանացուցանել զԱրայ...

Այնինչ էնդոֆոր (հղում է մի կոնկրետ բառի-առարկայի) հարակրկնությունը կվերցնի նորմալ հղման գործառույթ նախորդող ասույթի հետ, առանց որևէ կապի (պատմիչի) խոսքի պահի հետ:



Սխեմա 8

Երկրորդ՝ ամբողջական ծածկման դեքում, անցյալ անկատարը, որը, ինչպես ներկան տալիս է իրադարձը իր սկզբից և վերջից կտրված, հարակրկնական է, այսինքն հարկ է գտնել մի կողմից բացող ժամանակային ռեֆերենտը՝ բացող սահմանը ընդհանրապես տրված անցյալ կատարյալով, մյուս կողմից փնտրել փակող սահմանը՝ նույնպես անցյալ կատարյալով, ինչը սպասում է առաջացնում: Այստեղ փակող սահմանը տրված է ներկայով (հրամայե), որը փոխարինում է անցյալ կատարյալին: Խնդիրն այն է, որ բացող սահմանը կարծես թե բացակա է, նախորդող ասույթը ներկայով է, այն էլ ուղղակի խոսքով:


Իսկ ի դրդուել միևսանգամ դօրացն Հայոց ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ, քինախնդիր լինել մահուանն Արայի՝ ասէ. «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա, և կենդանացի»: Միանգամայն և ական ունէր դիւթութեամբ վհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տուփական ցանկութենէն: Իսկ իբրև նեխեցաւ դի նորա՝

19 A. C u l i o l i. Pour une linguistique de l'Enonciation. Operations et representations. T.1, Paris, 1990.

20 Առասպելը և թատրոնը հին Հունաստանում սերտ կապի մեջ էին. τραγωδία նշանակում էր այծի երգ, այսինքն երգը, որի ուղեկցությամբ զոհում էին այծին:

հրամայեց ընկենուլ ի վիճ մեծ և ծածկել. զմի ոմն ի հոմանեաց իւրոց զարդարեալ անելով ի ծածուկ՝ համբաւէ զնմանէ այսպէս...

Շամիրամի խոսքի տևողությունը շատ կարճ է, որպեսզի տեղավորենք նաև նրա կախարդական փորձերը. ակն ունէր բայական շարույթը որպես իրադարձ պետք է որ նախորդի և հաջորդի... Արդյունքում ստացվում է, որ նա արդեն մինչ այդ (խոսելու պահին) ակն ունէր:



Սխեմա 9

Ինչպես հասկանալ ուրեմն ակն ունէր կառույցը ...եթե փորձենք ավելացնել սկսել ինխոատիվ (սկսնային) բայը, ապա կտեսնենք, որ այն իր սեմանտիզմով ամբողջովին իրավիճակ մատնացույց չի անում [հմտ. նա (ACTOR) երջանիկ էր (STATE)] [նա (ACTOR) ակն ուներ (STATE + DIRECTION)], այսինքն չի նշում մի «տևողություն առանց որևէ փոփոխականության իրադարձի ընթացքում»²¹: Միանգամայն մակբայր (իմաստը՝ միևնույն ժամանակ) կարող է և ղուգահեռ չլինել Շամիրամի խոսքերին, ծածկել մի պրոցես, որը ընթանում է հետո: Ո՞ր մեկը ...ցենզուրայի ենթարկված արարողությունը ...Հիշեցնեմ այստեղ մի անգամ ևս առաջին գրքի վերջում տրված ծրագիրը (տե՛ս էջ 196):

Հարցին գուցե հնարավոր է պատասխանել, եթե անցյալ անկատարին տանք կատարյալ կերպի նշանակություն. նա ակն ուներ ⇒ նա կարծեց: Միանգամայն մակբայր այս գեպքում կստանա կատաֆորիկ (տե՛ս նախորդ էջ) արժեք՝ կծածկի գործողությունը իրադարձ 1-ից (կենդանասցի) մինչև իրադարձ 2-ը (նեխեցավ): Սակայն սույն վերասեմանտիզացիան բոլորովին չի լուծում հիմնական հարցը՝ իրագարձային պակասը, ստեղծված գլոբալ տեսանկյունը չի բացում միևնույն է ակն ուներ պատուհանը (Ա 1: Ա 2): Ի՞նչ էր ուզում կոնկրետ անել Շամիրամը (վհուկթեամբ), ի՞նչի վրա էին իսկապես հիմնված նրա հույսերը: Պատմիչը, պարզ է, որոշել է լուսնային մատնել Շամիրամ պատմողական ծրագրի մի շարք իրադարձներ: Ոչինչ չի ասված, օրինակ, արձանի (հիպերոնիմի գործառույթ) մասին ... այն կարդացվում է որպես ճերմակ խորհրդանշան, ցենզուրայի ենթարկված նշան: Ու՞ր է պատմաբանին յուրահատուկ *curiositas*-ը (հետաքրքրասիրությունը): Մոռացության հետևանք ... ցենզուրա ... Սա ևս մի անգամ շեշտը գնում է իբր ինտերտեքստի վրա: Մասնագետները գուցե կհիշեն, որ նույն տարիներին մի ուրիշ հեղինակ էլ (գուցե Խորենացու ընկերը)

21 C. V e t t e r s. Temps'aspect et narration. Amsterdam, 1996, p. 105.

Եզնիկը ինքն էր անդրադառնում նույն երևույթներին (տե՛ս Եղծ աղանդոց, 1):

Կ. Համրուրդերը²², անդրադառնալով հոգեբանական բայերի հարցին, հանգում է այն կարծիքին, որ դրանք ընդհանրապես քողարկում են դատողություն կամ էլ որևէ տեքստ փաստ. «Նապոլեոնը կարծում էր, որ իր կամքին կենթարկի Ռուսաստանը»: Այս նախադասությունում, ըստ Կ. Համրուրդերի, անցյալ կատարյալը հիմնվում է որևէ ապացույցի կամ տեքստի վրա, կանխենթադրում դիտելիք: Բոլոր դեպքերում էլ, նա ակնունկը բայական դարձվածքը կանխենթադրում է, որ նա արդեն փորձել էր... Հիշենք նաև, որ Բաբելոնում թագավորները կիսաստվածներ էին: Սարգոնն, օրինակ, իրեն համարում էր աստվածների ընտրյալ: Մնում է վերջապես մի ուրիշ հանդամանք, ամբողջ տեքստը շեշտը դնում է ձեռնածուկության վրա՝ Շամիրամը գտնվում է ինչ-որ կույր տենչանքի իշխանություններից: Ու՞մ է նա ենթարկվում, ի՞նչին ...Աստվածները կարծես թե խախտում են ինչ-որ խոստում կամ փոխում ծրագիրը: Գուցե այդ մասին էր խոսում իբր ինտերտեքստը: Ամերիկյան հնագետներ Կրամերը և Վոլկշտայնը²³, անդրադառնալով ասորական առասպելներին, նշում են, որ աստվածները շատ դեպքերում հրաժարվում էին միջամտել:

Ելնելով ուրեմն ինֆերենցիալ եզրակացությունից, ես կասեի, որ այստեղ գործ ունենք վերամշակված տեքստի հետ: Այդ մասին են վկայում նաև վերացական դոյականները՝ ցանկություն, մոլեգնություն, շամբշություն²⁴: Նրանք, ինչպես Ռ. Վ. Լանգակերն²⁵ է ասում, «մատնացույց են անում մի պրոցես՝ շրջանով», այսինքն գոյականացրած բայեր են (ինձ համար, սույն տեքստում, պատումի որոշ բայեր): Այս խնդրին է առնչվում շարահյուսական մեկ այլ խնդիր՝ այսպես ասած հետին պլանի անորոշ դերբայներն իրենց հայցական հոլով վերցնող ենթականերով: Հենց այս դերբայներն են օգտագործված որպես ժամանակավորապես փոխարինող կիրառումներ: Համարյա բոլոր ստորադասական նախադասությունները դիմում են սույն կառույցին: Ահա մի օրինակ.

(1) Եվ ի բազում անդամ երթևեկություն հրեշտակազնացություն լինել, և յոչ հաւանել Արային, ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ ի վախճանի պատգամաւորութեանն առնու զբազմութիւն զօրաց իւրոց, և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց ի վերայ Արայի:

Գրարարում կիրառական էր շրջասություններ կան. Ի (կասլ) + անորոշ դերբայ + օժանդակ բայը ներկայում: Այստեղ չունենք օժանդակ բայը: Ըստ իս, սույն կառուցվածքի բնույթը տարբեր է: Այն կրկնված է, օրինակ, անցյալ կատարյալով.

(2) Սա կեցեալ ամս՝ ծնաւ զԿարդոս:

22 K. H a m b u r g e r. La logique des genres littéraires. Paris, 1986, p. 88.

23 F. W o l k s t e i n & B. K r a m e r. Inanna: Queen of Heaven and Earth. New York, 1983.

24 Թարգմանությունը ուրիշ լեզուներով դժբախտարար անհետացնում է սույն երևույթը:

25 R. W. L a n g a c k e r. Noms et verbes, in *Communication* N 53, 1991 (texte de *Foundations of cognitive grammar*). V. 1, 1987, p. 134.

Եթե ուշադրութեամբ քննենք հանդիպելիությունը, ապա կտեսնենք, որ այն առարկայացման հետ է կապված. (1)-ում, օրինակ, անձը և թիվը չեն տրված բայում (անորոշ դերբայը), բայց շարահյուսական շրջակայքով: Ընդհակառակը, ներկաները կամ անցյալ կատարյալը կրում են և՛ անձը և՛ թիվը: Սա նախօրոք բացահայտված ռեֆերենտների (վերաբերյալների) ներկայության հետևանքն է. բայական վերջավորությունը հարակրկանական է (հղում է այդ ռեֆերենտներին): Այստեղից կարելի է եզրակացնել, որ անորոշ դերբայների կիրառումը ինքնըստինքյան առաջացնում է անձի և թվի առանձնացում: Դերբայների ներկայությունն, ուրեմն, պայմանավորված է ռեֆերենտների բացակայությամբ: Երբ այս վերջինները հայտնի են, պատմիչը օգտագործում է ներկան կամ էլ անցյալ կատարյալը:

Առաջին օրինակը, համեմայն դեպս, պատճառի և ժամանակի (ֆրանսերենի պարտիցիպային ստորադասական նախադասությունը) ստորադասական նախադասություն է. և-ն ունի ժամանակի շղկապի գործառույթ, նշում է հետին պլանը: Պարտիցիպները և անորոշ դերբայը, ըստ Ռ. Վ. Լանգակերի²⁶ «կմախքին ավելացնում են մկանային հյուսվածքը, նշում նրա կոնֆիգուրացիան»: Արայի «հարություն», այսպես ասած կենտրոնական գործողության նախապատրաստական տարածքը, խտացված է (compacté) է և՛ իմաստային, և՛ շարահյուսական մակարդակում: Սույն տարածքում են՝ 1. հրեշտակազնացությունը (դելեգացիաները) 2. Շամիրամի վհկությունը:

Կա՞ արդյոք որևէ ուղղակի կապ ինտերտեքստերի հետ (խտացված և հետին պլան (setting) նետված իրադարձների սերիան): Հավանաբար: Է կապին կցվելով անորոշ դերբայները կորցնում են իրենց տեղիկ բնույթը և ենթարկվում գոյականացման: Հավանաբար, որովհետև ուրիշ կերպ բոլորովին անհասկանալի է թվում ներկայի ներխուժումը նախադասություն. ի վախճանի պատգամաւորութեանն առնու զբազմութիւն զօրաց իւրոց ...

Ս. Մալխասյանի թարգմանությունը ժամանակակից հայերենի ընդունում է ներկայում վերջացող անցյալ կատարյալի տարբերակը սույն անորոշ դերբայների համար, բայց դա ինչ-որ կերպ աղավաղում է պերսպեկտիվայի խաղը, նույն պլանի վրա գնում այն, ինչ պատմիչի մոտ տարբեր պլանների վրա էր²⁷.

Երբ պատգամավորները շատ անգամ երթևեկություն կատարեցին և Արան չհամաձայնեց, ապա Շամիրամը սաստիկ չարանալով, պատգամավորությունը դադարեցնելուց հետո, առնում է իր գործի բազմությունը և շտապում է գնալ Հայոց երկիրը՝ Արայի վրա:

26 Նույն տեղում, էջ 137:

27 Ա. Բոննարը (1981:4603) տալիս է մի քանի օրինակ, այսպես ասած, «հակերպված» թարգմանությունների վերաբերյալ: Ժ. Բեդիեն թարգմանում է հետևյալ տողերը ներկան վերածելով անցյալ կատարյալի.

Li arcevesque les ot cuntrarier
Le cheval broche les espeuns d'or mer
Vint tresqu'a els , sis prist a castier .

L'archeveque les entend qui se querellent.
Il éperonne de ses eperons d'or pur,
Vient jusqu'à eux , et les reprend tous deux.
(La chanson de Roland 1737-34).

* * *

Սույն քննարկումը, կարծում ենք, բացում է որոշ չնախատեսված հորիզոններ. ասելիք գեռ շատ կա ...Բայց գլխավորն, ըստ մեզ՝ պատումի նախապատրաստական աշխատանքը հասկանալն էր: Այն, ինչպես փորձեցինք ապացուցել, ոչ միայն գիտական, սեմիոտիկ գործառույթ է, այլև կատարողական ակտ (հարաբերություն ես-ի, դու-ի և նա-ի միջև): Ժամանակային ռեֆերենցիան և տեքստի նշանակությունը հարկ էր ուսումնասիրել հենց այս կոնտեքստում: Այսպիսով, հնարավոր դարձավ մոտենալ (առանց ամբողջովին բացելու) տեքստի չստացված քողարկված շերտին (հարաբերությունները ինտերտեքստերի հետ): Պատմություն 15-րդ դարից կառուցված է (սա տրամաբանորեն պետք է վերաբերի և մյուս գլուխներին) «կրոնների մրցակցություն» սեմանտիկ օբյեկտի շուրջ. թեմատիկ երթը (և ֆիզիկալատիվ) ի հայտ բերեց բոլոր այն հնարները, որոնցով ներկայանում է այդ օբյեկտը: Մենք մոռանում ենք շատ դեպքերում, որ խորենացին ևս ընթերցող էր, որ իր տեքստը պարունակում է նաև իր մեկնաբանությունները:

Քերականական սեմանտիկայից ելնելով, հետազոտեցինք ուրեմն, ինչպես ասում են այսօր, կոնտեքստը, այն ինչ ընկնում է ասույթի ձախում կամ էլ աջում, առաջ կամ էլ հետո: Փորձեցինք գտնել ֆենոմենոլոգիական օբյեկտիվություն, մի օբյեկտիվություն, որը համապատասխանում է աշխարհի որակական կառուցվածքին (եթե, իհարկե, այն հնարավոր է որսալ լեզվի տարածքում): Սույն կառուցվածքում ինձ հետաքրքրեցին հատկապես զանազան գործողությունները (խոսքային գինամիկան), քանի որ պատահում է շատ դեպքերում, որ որևէ պրոցեսում բոլոր էտապները չեն ներկայացված (օրինակ՝ ստանալ բայը): 15-րդ դարի համարյա ամեն մի իրադարձի մանրակրկիտ քննությունը բացահայտեց, որ համարյա ամեն մի իրադարձ քողարկում էր ուրիշ իրադարձներ (պոլիօպերացիա): Ինչպես նշում են սեմիոլոգներ Բորելը, Գրիզը և Միեվիլը²⁸. Մի կոնկրետ կամ էլ վերացական օպերացիա, պատահում է, հանգում է մի արդյունքի, որը հնարավոր է վերլուծել մաս առ մաս, չնայած մասերի սերտ կապին: Մենք դանվանում ենք պոլիօպերացիա: Ենթադրենք, օրինակ, որ վրձինով գիծ քաշելը մի օպերացիա է. պարզ է, որ այս գիծը միևնույն ժամանակ և՛ կոնտուր է և՛ մակերես:

Այսուհանդերձ, մեր նպատակը խորենացուն ստեղծագործական ինչ-որ պահին որպես անհատ բացահայտելը չէր. խոսքի ատյանի միջամտությունը ուղղակի կապի մեջ չէ անհատի սուբյեկտիվության հետ: Բացատրել այս վերջինը համարյա անհնարին է: Իրադարձների կարգավորումը և ժամանակային ռեֆերենցիան լեզվաբանական հարցեր են և ոչ մետաֆիզիկական:

Տեքստի քննությունը անցավ 3 փուլով.


1. Հատվածավորում:
2. Ընդհատումների արձանագրում:
3. Կապակցություններ և անցումներ (transition):

28 M.-J. Borel, J.-B. Grize et D. Mievillie. Essai de logique naturelle. Berne, 1983, p. 115.

Քննարկման կենտրոնում էր, ուրեմն, պատումը՝ ֆունդամենտալ երևույթ, երբ ուզում ես հասկանալ մտքի գործունեությունը. Մարդու միտքը, գրում է Վ. Տ. Անդերսոնը, շարունակում է գործել որպես պատում²²:

Ինչպես ընթերցողը նկատած կլինի, հիմնվելով հանդերձ սեմանտիկ քերականության դրույթների վրա, միևնույն ժամանակ դիմեցինք պատմաբանասիրական ավանդույթի (հին բանասիրության) մեթոդներին, քանզի Դրանք ունեն իրենց առավելությունները, որոնք չպետք է արհամարհել:

Քերականական իմաստաբանությունը (այստեղ՝ ժամանակի հարցում) կարող է նախորդել պատմաբանի աշխատանքին, կարգավորել նրա առաջընթացը, խուսափել քառային խոսքից: Իսկապես, շատ հաճախ հաշվի է առնվում բուն պատմական տարածքը և համարյա երբեք խոսքային իրականությունը, որը հիմնում է այն:



Ասորեստանը և Ուրարտուն – 1300 թ. Յ. Ք.-ից առաջ

29 W. T. A n d e r s o n. Reality is not what it used to be. San Francisco, 1991, p. 55.



Կենաց ծառը. Ուրարտու,
Երևանի պատմության
թանգարան



Գիլգամեշ. Դուր-Շարուքինի պալատ



Ասորական թագավորը ընդունում է պարտվածներին.
Բրիտանական թանգարան



Սելիշիշու II-ի կուղություն (1202–1118 թ. թ.-ից առաջ). Փարիզ. Լուվր: Կուղություն մի մեծ կլոր քար է. քանդակելուց հետո այն նվիրում էր իշխաններին: Այս կուղություն կարելի է տեսնել Անի խորհրդանշանը (երկինքը) և ենկիլինը (օդը), որոնք ներկայացված են որպես պոզավոր բազ պատվանդանի վրա: Խոյի գլուխը ձկան վրա ներկայացնում է ջուրը և անդունդը: Վերևում կարելի է նկատել Նաննայի կիսալուսինը (Նաննան՝ սումերական տրադիցիայի համար. Աինը՝ Բաբելոնի համար), Լուսնի աստվածը, Իշտարի աստղը և Քումաշի արևը:

ПОВЕСТВОВАНИЕ И ВРЕМЕННАЯ РЕФЕРЕНЦИАЦИЯ В “ИСТОРИИ
АРМЕНИИ” МОВСЕСА ХОРЕНАЦИ
(Книга первая, глава XV, об Ара и смерти его в войне против
Шамирам)

МИШЕЛЬ ПОЛАДЯН (Париж)

Р е з ю м е

Цель настоящей статьи – восстановить процесс издания и организации 15-й главы “Истории Армении” Мовсеса Хоренаци, исходя из анализа временной референциации (соотношений между временем повествования и историческим событием) и внутренней структуры повествования. Используя возможности новых подходов в семантической грамматике, автор статьи проявляет своеобразный подход к исследованию средневековых исторических текстов.

NARRATIVE SCHEMES AND TIME REFERENCES IN MOVSES KHORENATSI'S
HISTORY OF ARMENIA

(Book one, chapter XV, on Ara and his death in the war against Shamiram)

MISHEL POLADYAN (Paris)

S u m m a r y

This article tries, from the semantic point of view (the relations between time references and the historical event) and from the inner narrative schemes, to establish the creative and structuring work of Movses Khorenatsi's *History of Armenia*. It presents, the author hopes, a new field and a new way for the analysis of Armenian medieval texts.